Սերգեյ Դովլաթով

Մերոնք

2

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Ռոման Ստեփանովիչ քեռիս սիրում էր կրկնել.

— Առողջ մարմնում՝ համապատասխան ոգի...

Երիտասարդության տարիներին կինտո էր Թիֆլիսում: Այս բառը թարգմանելը բավական դժվար է: Կինտոն ո՛չ խուլիգան է, ո՛չ հարբեցող, ո՛չ էլ պորտաբույծ: Թեև խմում է, խուլիգանություն է անում ու չի աշխատում...

Քեռիս հսկայական խանչալ ուներ: Պատանեկությունից սիրում էր նապարեալի գինի ու մարմնեղ շիկահեր կանանց...

Ճշմարիտ կինտոյի գլխավոր արժանիքը, թերևս, սրամտությունն է: Քեռուս հումորը աչքի էր ընկնում որոշ յուրօրինակությամբ: Տասնչորսամյա քեռիս, օրինակ, քիչ էր մնացել խափանի վրացական խորհրդային հանրապետության հոբելյանը:

Տեղի էր ունեցել հետևյալը: Թբիլիսիում լայնորեն նշվում էր նշանակալի տարելիցը՝ հանրապետության յոթնամյակը: Լիբկնեխտի անվան մշակույթի պալատի հսկայական դահլիճը լեփ-լեցուն էր: Բարձրաստիճան ղեկավարությունը ճառեր էր արտասանում: Նրանցից հետո բեմ էին

բարձրանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Հայերի կողմից ելույթ պիտի ունենար մորաքույրս: Անունը Անելյա էր: Անելյա մորաքույրս երկու շաբաթ պատրաստվել էր այդ ելույթին:

— Արդեն յոթ տարի է... — սկսում է նա: Դահլիճը սսկվում է:

— Արդեն յոթ տարի է... — կրկնում է մորաքույրս:

Ինչ-որ չխկոց է լսվում: Ինչ-որ մեկը փորձում է անձայն անցնել շարքերի միջով:

— Արդեն յոթ տարի է... — փոքր-ինչ ավելի վստահ ձայնով ասում է Անելյա մորաքույրս:

Ետնաբեմի դիմանկարից խորամանկ ժպիտով հանդիսականներին է նայում գեներալիսիմուսը: Լիակատար լռություն է: Այս պահին լսվում է քեռուս առույգ ձայնը.

— Արդեն յոթ տարի է, ոչ ոք չի ուզում ամուսնանալ Անելյայի հետ:

Անելյա մորաքույրս հեկեկալով հեռանում է բեմից: Ռոման քեռուս մի օր պահում են միլիցիայում...

Դեռ պատերազմից առաջ քեռիս որոշում է ընդունվել համալսարան ու դառնալ փիլիսոփա: Որոշակի նպատակ չունեցող մարդու համար միանգամայն բնական որոշում: Կյանքի անորոշ ու մշուշոտ զգացողությամբ բոլոր մարդիկ երազում են զբաղվել փիլիսոփայությամբ:

Ռոման քեռիս գործերը տալիս է համալսարան: Ռուս գրականության քննությունն է: Քեռիս կանգնեցնում է քննությունից դուրս եկող դիմորդներին ու հարցնում .

— Կներես, սիրելիս: Քեզ ի՞նչ հարց ընկավ:

— Պուշկին, — ասում է մեկը:

— Հիանալի է, — բացականչում է քեռիս: — Հենց դա չէի սովորել:

— Լերմոնտով, — ասում է երկրորդը:

— Հիանալի է, — բացականչում է քեռիս: — Հենց դա չէի սովորել:

— Գոգոլ, — ասում է երրորդը:

— Հիանալի է, — բացականչում է քեռիս: — Հենց դա չէի սովորել:

Վերջապես կանչում են Ռոման քեռուս: Մոտենում է սեղանին, քաշում տոմսը ու կարդում . «Գրիբոյեդովի ստեղծագործական ուղին»:

— Վայ իմ բախտին, — բացականչում է քեռիս: — Հենց սա չէի սովորել . . .

Երբ սկսվեց պատերազմը, քեռիս ուրախացավ: Պատերազմում նրա պես մարդիկ գին ունեն: Խաղաղ ժամանակ էլ քեռիս կռվել սիրում էր:

Վերադարձավ փոխգնդապետի կոչումով: Պատերազմը նրան մարդ դարձրեց:

Մյուս բոլոր պաշտոնաթող փոխգնդապետների պես, քեռիս ղեկավարում էր անվտանգության տեխնիկայի բաժինը «Լույշ» ֆաբրիկայում: (Գնդապետները ղեկավարում են կադրերի բաժինները:)

Հնարավոր է, որ գաղափար ուներ անվտանգության տեխնիկայի մասին . չի բացառվում: Իր ողջ եռանդը, սակայն, նվիրում էր ֆիզկուլտ-մասսայական աշխատանքներին: Կազմակերպում է կոլեկտիվ մրցալողեր, դահուկավազքեր: Անցկացնում է վոլեյբոլի մրցումներ: Նրա մասին գրում են թերթերում:

Վաթսուներեք տարեկանում նա հիանալի դահուկորդ էր ու կարող էր հաջողությամբ կռվել փողոցում:

— Առողջ մարնում՝ համապատասխան ոգի, — հաճախ կրկնում էր նա:

Իմ նկատմամբ Ռոման քեռիս տածում էր անկեղծ քամահրանք: Առավոտյան մարզանք չէի անում: Սառը ջրով մարմինս չէի շփում: Առհասարակ՝ ատում էի կտրուկ շարժումները: Իսկ եթե ինձ կոպտում էին, փորձում էի զիջումների գնալով հարթել: Թեև ինձ հազվադեպ են վիրավորում: Ամբողջ կյանքիս

ընթացքում՝ ընդամենը երեք անգամ: Երեք անգամն էլ՝ քեռիս:

— Ինտելիգե՛նտ, — գոռում էր նա: — Կնիկարմա՛տ...

Երբ հարցնում էին, թե ով է իր սիրած գրողը, քեռիս անվարան պատասխանում էր.

— Մարտին Իդենը:

Փողոցային կռիվներում իր սխրանքների մասին պատմում էր ժամերով: Ընդ որում՝ շատը հորինում էր: Իսկ երբ հարցնում էի պատերազմի մասին, քեռիս համառորեն լռում էր: Չէր սիրում այդ մասին խոսել: Չեմ կարող ասել, թե ինչու...

Քեռիս երեխաներ ուներ Սուխանովա Աննա Գրիգորևնայից: Տղա և աղջիկ: Պարբերաբար այցելում էր նրանց: Թերթում էր դպրոցական տետրերը, ստորագրում օրագրերը: Եվ անփոփոխ կրկնում.

— Առողջ մարմնում՝ համապատասխան ոգի:

Մի անգամ Աննա Գրիգորևնան խոհանոցում գործ անելիս է լինում: Երեխաները սենյակում խաղալիս են լինում հոր հետ: Քեռիս անսպասելիորեն բաց է թողնում: Երեխաները սկսում են հոհոալ:

Լսելով աղմուկը՝ գալիս է Աննա Գրիգորևնան: Կանգնում է շեմին, ձեռքերը խաչում կրծքին ու խորիմաստ ասում.

— Երեխաներին, այնուամենայնիվ, հայր պետք է: Ինչ լավ խաղում են, կատակում, ծիծաղում...

Քեռիս կին էլ ուներ՝ Գալինա Պավլովնան: Ինչպես ինքն էր ասում՝ բուժաշխատող: Քեռիս սիրում ու հարգում էր նրան: Քանզի Գալինա Պավլովնան կիսում էր նրա փիլիսոփայական կրեդոն՝ «Առողջ մարմնում՝ համապատասխան ոգի»:

Մի օր նրանց բնակարանի զանգը տալիս են: Քեռիս աշխատանքի է լինում: Իսկ Գալինան ընդմիջմանը եկել էր ճաշելու: Եվ ահա հնչում է դռան զանգը:

— Ո՞վ է, — հարցնում է Գալինան:

Տղամարդու ձայնն ասում է.

— Մի բաժակ ջուր կտա՞ք հղի կնոջս:

Բացվող դռնից ներս է մտնում մի հաղթանդամ տղամարդ ու առանց որևէ բառ արտասանելու սրած խարտոցը խրում տանտիրուհու փորը: Գալինան նետվում է դեպի հեռախոսը: Գիտակցությունը կորցնելով ճչում .

— Ռոմա՛: Փրկի՛ր: Սպանում են . . .

Քեռիս տեղ է հասնում կես ժամ հետո՝ բեռնատարով: Գալինային «Շտապ օգնություն» արդեն տարած է լինում: Բանդիտին բռնել էին հարեւանները: Ձեռքերը ոլորելիս, նա ծիծաղում էր: Նրա արարքի շարժառիթները այդպես էլ անհայտ մնացին: Հնարավոր է, որ մոլագար էր . . .

Այդ օրը քեռիս ամբողջ երեկո լավ է եղել: Իսկ երբ Գալինային դուրս գրեցին հիվանդանոցից, գամփռ շուն առավ:

Անունը Գոլդա էին դրել: Դա քեռուս սրամտության ու հազիվ նկատելի հակասեմիթիզմի դրեւորումն էր:

Հայերից շատերը (հատկապես Վրաստանի հայերը) չեն սիրում հրեաներին: Չնայած շատ ավելի տրամաբանական կլիներ, եթե չսիրեին ռուսներին, վրացիներին կամ թուրքերին: Հրեաներն էլ առանձին ջերմությամբ չեն վերաբերում հայերին: Երեւի հալածվածները հակված չեն սիրելու այլ հալածականներին: Գերադասում են սիրել տերերին: Ծայրահեղ դեպքում՝ իրենց . . .

Գամփռի անունը Գոլդա էր: Սկզբում հմայիչ ծուռթաթ քոթոթ էր: Հետո մեծացավ, մասնակցում էր ցուցահանդեսների: Ինչ-որ երկրորդական մեդալ էլ

կարծեմ ստացավ: Բայց մի օր առանց որեւէ պատճառի դաժանորեն կծեց Գալինային:

Քեռիս ուզում էր սպանել շանը, բայց կինը համոզեց չանել այդ բանը: Հանձնեցին շնաբուծարան: Ռոման քեռիս շարունակում էր առավոտները մարզանք անել, ձիգ ու բարեկազմ տեսք ուներ: Կարող էր ցատկել ընթացող տրամվայի ոտնակին ու կարգի հրավիրել ցանկացած խուլիգանի: Սակայն խուլիգանների գրեթե չէր հանդիպում, տրամվայներն էլ քաղաքում շատ չէին . . .

Ու հանկարծ ինձ հաղորդեցին, որ քեռիս հոգեբուժարանում է: Գալինա Պավլովնան ասաց՝ «նյարդաբանական կլինիկայում»: Բայց դա հոգեբուժարան էր:

Գնացի այնտեղ: Մի քանի անշուք, գորշ շինություններ՝ շրջապատված անխնամ ծառերով ու ցանցառ թփերով: Փոշոտ ծառուղիներում ճեմում էին հիվանդները՝ միատեսակ գորշ խալաթներով: Խալաթները կամ շատ մեծ էին, կամ շատ փոքր: Կարծես բարձրահասակներին դիտմամբ տալիս էին փոքր չափսերը: Իսկ վտիտ ցածրահասակներին՝ ամենամեծերը:

Հիվանդները հիմնականում միայնակ էին զբոսնում: Ոմանք զուսպ ու վերացած շարժումներ էին անում՝ անձայն բացուխուփ անելով բերանները: Վախ չէի զգում, միայն խղճահարություն:

Վերջապես կանչեցին քեռուս: Զարմանալիորեն աշխույժ ու առույգ տեսք ուներ: Դեմքը նույնիսկ փոքր-ինչ թխացել էր արևից: Ասաց, որ լավ են կերակրում: Իսկ գլխավորը՝ թույլ են տալիս երկար ժամանակ անցկացնել մաքուր օդում:

Հետո քեռիս տագնապած նայեց շուրջը ու շշուկով ասաց.

— Ուշադիր լսիր ինձ: Ակնոցավորները վիթխարի ավանտյուրա են ձեռնարկել...

— Ովքե՞ր, — չհասկացա ես:

Հարցիս չպատասխանեց: Մի տեսակ զվարթ ոգևորությամբ շարունակեց.

— Բարդուղիմեոսյան գիշերվան փառք ենք տալու...

Ինձ կորցրի: Դրան պարտաստ չէի: Չգիտեի ինչպես պահեմ ինձ: Առարկեմ թե համաձայնեմ:

Մի պատանի անցավ մեր կողքով՝ հրելով սայլակի վրա ամրացված խմելու ջրի տակառը: Ծորակի տակ սև տառերով գրված էր՝ «Ջուր»:

Քեռիս անսպասելիորեն սկսեց սուլել: Պատանին անհետացավ ծառերի հետևում:

— Արյան գետեր են հոսելու, — գլուխը տարուբերեց քեռիս: Սարսափից մտա տարօրինակ մի դերի մեջ:

— Գուցե մի կերպ դո՞ւրս պրծնենք, — ասացի:

— Ոչ մեկի չեն խնայելու, — ցածրաձայն ասաց քեռիս: — Մի մասին կոչնչացնեն, մյուսներին կստիպեն ստորագրել: Բայց ես մի բան եմ մտածել: Ուշադիր լսիր:

Գլուխը մոտեցրեց գլխիս ու խորամանկ ժպիտով ասաց.

— Ամենահանճարեղ պլանն անգամ խոցելի է: Եվ շղթան, որպես կանոն, կտրվում է ամենաանսպասելի տեղում: Աննշմար մի շարժում՝ և խաղաթղթերն իրար են խառնվում... Խախտված են, ինչպես ասում են, խաղի կանոնները... Գաղտնիքն այն է, որ դա պետք է բացարձակապես անկանխատեսելի քայլ լինի... Ես գտել եմ: Ուշադիր լսիր:

Քեռուս ժպիտը չքացավ, նա խոսեց սպայի պես՝ հակիրճ ու հատու.

— Առաջին քայլը հիմնականն է: Երկրորդը՝ ապահովության համար: Եթե ձախողվենք: Գրառումներ մի՛ արա, — կտրեց քեռիս:

— Եղավ, — ասացի:

— Ու հիշի՛ր: Նախեւառաջ՝ ծխել սիգարետներ առանց ֆիլտրի եւ մի՛միայն առանց ֆիլտրի: Երկրորդը, հագնել միաժամանակ երկու անդրավարտիք . . .

Հաղթականորեն հռհռաց, շփելով ձեռքերը:

— Հասկացա՞ր, — հարցրեց:

— Այո, — ասացի:

— Պլանը գատնի է: Ոչ մի բառ՝ անգամ մոտիկ մարդկանց: Այլապես ամեն բան կորած է: Սպասեք իմ հետագա ցուցումներին: Իսկ հիմա ես պետք է գնամ: Բարով մնաս: Շնորհակալ եմ մտքերի համար . . . Թեեւ դրանք բացարձակ ֆիկցիա են . . .

Եվ հեռացավ՝ անհեթեթ խալաթը հագին, թեթեւ-սպորտային քայլքով . . .

Մեկ ամսից քեռիս առողջացավ: Հանդիպում էինք ընտանեկան խնջույքներին: Քեռիս զուսպ քմծիծաղում էր:

Պատմում էր, որ ամեն օր վազում է Անտառատեխնիկական ակադեմիայի շուրջը: Իրեն արտակարգ առողջ ու առույգ է զգում:

Հատուկ նրա համար միշտ պատրաստում էին թարմ բանջարեղեն: Կողքին անփոփոխ նստում էր Գալինա Պավլովնան: Վերջինիս ձեռքերին երեւում էին շան ատամների թողած սպիները:

Պատկերացրի, թե ինչպես է քեռիս վաղ առավոտյան վազում Անտառատեխնիկական ակադեմիայի ցանկապատի երկայնքով:

Աստված իմ, ո՞ւր . . .

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Լեոպոլդ հորեղբորս կյանքը ծածկված էր տարաշխարհիկ մշուշով: Նրանում ինչ-որ բան կար Մայն Ռիդի և Կապերի հերոսներից: Նրա ճակատագիրը

երկար տարիներ հանգիստ չէր տալիս երևակայությանս: Հիմա դա անցել է:

Եկեք, սակայն, առաջ չընկնենք:

Հրեա պապս երեք որդի ուներ: (Թող չշփոթեցնի ձեզ այդ բիլինայական երանգը): Նրանց կոչում էին Լեոպոլդ, Դոնաթ և Միխայիլ:

Կրտսերին՝ Լեոպոլդին, կարծես դիտմամբ էին անդրծովյան անուն տվել: Հաշվի առնելով իր՝ ապագա կոսմոպոլիտի կենսագրությունը:

Դոնաթ անվան ծագումը անորոշ բալթյան-լիտվական է: (Ինչը համապատասխանում է հորս անորոշ դրությանը: Յոթանասուներկու տարեկան հասակում նա արտագաղթեց Ռուսաստանից):

Ջուտ ուղղափառ անուն կրող Միխայիլը թոքախտից մահացել է շրջափակված Լենինգրադում:

Անունը, համաձայնեք, նկատելիորեն կանխորոշում է մարդու բնավորությունն ու անգամ կենսագրությունը:

Անատոլին գրեթե միշտ լկտի ու կռվարար է լինում:

Բորիսը՝ գիրանալու հակում ունեցող խոլերիկ:

Գալինան՝ ճղճղան ու գռեհիկ բանսարկու:

Զոյան՝ միայնակ մայր:

Ալեքսեյը թուլակամ ու բարեհոգի:

Գրիգորի անվան մեջ ես նյութական բարեկեցության հնչերանգներ եմ լսում:

Միխայիլ անվան մեջ՝ վաղաժամ ողբերգական մահվան խուլ նախագույժ: (Հիշեք Լերմոնտովին, Կոլցովին, Բուլգակովին...): Եվ այլն:

Միխայիլը ինքնամփոփ ու անմարդամոտ երեխա էր: Բանաստեղծություններ էր գրում: Հեռավոր Արևելքում ֆուտուրիստական խմբակ էր ստեղծել: Նրան չափավոր լկտի, բարեկամական նամակ էր գրել անձամբ Մայակովսկին:

Հայրս պահում է ավագ եղբոր գրած երկու գրքերը: Մեկը կոչվում է «Մ-ու-ու»: Երկրորդի վերնագիրը մոռացել եմ: Վերնագրի մի մասը հանրահաշվական բարդ բանաձեւ է:

Բանաստեղծությունները բավական անհեթեթ են: Լիրիկական բանաստեղծությունների մեկը վերջանում է այսպես .

Ամբողջ մարմնով դողում էի, եւ ցանկությունս միակ Գլուխս պատին տալն ու ջարդված գլխով վայր ընկնելն էր . . .

Գրքի վերաբերյալ պահպանված մի գրախոսությունից հիշողությանս մեջ մնացել է գոեհիկ այս արտահայտությունը՝ «Ապուշին ուղարկիր Աստծուն աղոթելու, նա ճակատն էլ կջարդի» . . .

Միխայիլը արտասովոր ինքնամփոփ մարդ էր: Ազգականները պատկերացում իսկ չունեին, թե նա ինչով է զբաղվում: Մի անգամ, արդեն հասուն տարիքում, Դոնաթն ու Միխայիլը միմյանց անսպասելիորեն հանդիպում են Բրյանսկի ամառային թատրոնի հետնաբեմում: Պարզվում է, որ եղբայրները մասնակցում են նույն էստրադային ծրագրում: Դոնաթը երգիծական քառյակներ էր երգում: Միխայիլը հանդես էր գալիս աստունքով:

Ավագ եղբայրները հակում ունեին դեպի գրականությունը, արվեստը: Կրտսերը՝ Լեոպոլդը, փոքրուց ընտրել էր այլ՝ ավելի ապահով ուղի:

Լեոպոլդը աֆերիստ էր մեծանում:

Տասնչորս տարեկանում ծխախոտ էր վերավաճառում նավահանգստում: Արտասահմանցի նավաստիներից սիգարներ էր գնում Ուրին եղբայրների գիշերային ռեստորանի համար: Հետո անցավ կանացի գուլպաներին ու կոսմետիկային: Հարկ եղած դեպքում արտասահմանցիներին ուղեկցում էր Կոստյա փողոցի հասարակաց տունը: Զուգահեռաբար բռնցքամարտ էր

պարապում «Իկար» մարզական ակումբում: Իսկ կիրակի օրերին շեփոր էր նվագում քաղաքային այգում:

Տասնութ տարեկանում Լեոպոլդը իրականացրեց իր առաջին մեծ խարդախությունը: Այսպես եղավ:

Քաղաքի կենտրոնական խանութներից մեկն է մտնում մի վտիտ, համեստ պատանի՝ ձեռքին ճմրթված թերթերի մեջ փաթաթված ջութակ: Պատանին դիմում է խանութի տիրոջը՝ Տանակիսին .

— Անձրեւը շատ հորդ է: Վախենում եմ ջութակս թրջվի: Կարո՞ղ եմ ժամանակավորապես այստեղ թողնել:

— Կարող ես, ինչո՞ւ չէ, — անտարբեր ասում է Տանակիսը:

Մեկ ժամ անց խանութում հայտնվում է շքեղ հագնված մի օտարերկրացի՝ կասկածելիորեն շիկավառ բեղերով: Երկար շրջում է ցուցադարակների արանքում՝ անշտապ դիտելով ապրանքը: Հետո պարզում է ձեռքը, մի կողմ քաշում ճմրթված թերթն ու բացականչում.

— Չի՛ կարող պատահել: Չե՛մ հավատում: Երա՛զ է սա: Արթնացրե՛ք ինձ: Այս ի՜նչ բախտավորություն է իսկական Ստրադիվարի: Ես գնում եմ այս ջութակը:

— Ջութակը չի վաճառվում, — ասում է Տանակիսը:

— Պատրաստ եմ վճարել ցանկացած գումար:

— Ցավում եմ...

— Տասնհինգ հազար՝ կանխիկ:

— Խիստ ցավում եմ, պարոն...

— Քսան հազար, — բացականչում է օտարերկրացին:

Տանակիսը շառագունում է.

— Ես կխոսեմ տիրոջ հետ:

— Դուք շռայլ միջնորդավճար կստանաք: Ախր իսկական Ստրադիվարի է: Ո՛չ, մի՛ արթնացրեք ինձ, մի՛ արթնացրեք... Քիչ անց վերադառնում է գունատ պատանին:

— Եկել եմ ջութակս տանելու:

— Ես ուզում եմ գնել ձեր ջութակը, — ասում է Տանակիսը:

— Չեմ կարող վաճառել, — տխուր ասում է պատանին: — Ցավոք, չեմ կարող: Դա պապիկիս նվերն է: Ունեցածս միակ արժեքավոր իրը:

— Երկու հազար ռուբլի կտամ: Պատանու աչքերը լցվում են:

— Ես, իրոք, փողի կարիք ունեմ: Կմեկնեի բուժվելու: Բժիշկ Շվարցն ասում է, որ դա պարտադիր է առողջության համար: Եվ այնուամենայնիվ՝ չեմ կարող... Նվեր է...

— Երեք հազար, — ասում է խանութպանը:

— Ավաղ, չեմ կարող:

— Հինգ, — վրա է տալիս Տանակիսը:

Մտքում արագ հաշվում է. «Հինգ հազար կտամ այս լակոտին: Օտարերկրացին կվճարի քսան հազար՝ գումարած միջնորդավճարը: Կստացվի...»

— Ներիր, պապիկ, — լացակումած ասում է պատանին, — Ներիր ու մի բարկացիր: Հանգամանքներն են ստիպում դիմել այս քայլին . . .

Տանակիսը արդեն հաշվում էր թղթադրամները:

Պատանին համբուրում է ջութակը: Հեռանում է՝ հազիվ զսպելով լացը:

Տանակիսը գոհունակությամբ շփում է ափերը . . . Հասնելով շենքի անկյունին, պատանին կանգ է առնում: Հաշվում է թղթադրամները: Հետո գրպանից հանում է հսկայական շեկ բեղերը, գցում աղբարկղն ու հեռանում . . .

Մի քանի ամիս անց Լեոպոլդը փախչում է տնից: Օվկիանոսային շոգենավի նավանբարում հասնում է Չինաստան: Ճանապարհին առնետը կծում է նրան:

Չինաստանից ուղեւորվում է Եվրոպա: Հիմնավորվում է, չգիտես ինչու, Բելգիայում:

Իսահակ պապս նրա բացիկները չէր կարդում:

— Մալխամովես, — ասում էր պապս, — պերե օդում:

Ու կարծես մոռանում էր Լեոպոլդի գոյության մասին: Տատս թաքուն լալիս ու աղոթում էր:

Անցնում է մի քանի տարի: Իջնում է երկաթե վարագույրը: Լեոպոլդից լուրեր չեն գալիս:

Հետո գալիս է ինչ-որ Մոնյա: Պապիս ու տատիս տանը ապրում մեկ շաբաթ: Ասում է, թե Լեոպոլդը առեւտրի գծով է:

Մոնյան հիանում է հնգամյակների թափով: Երգում է՝ «Մեր շոգեքարշ, սուրա առաջ . . . » . . . Հետն էլ խիստ անկիրթ մարդ է լինում: Ջուգարանից բնակարանով մեկ գոռում է .

— Պապի՛ռ, պապի՛ռ:

Ու տատս կիսաբաց դռան ճեղքից նրան թերթ է տալիս:

Հետո Մոնյան մեկնում է: Դրանից քիչ անց պապիս գնդակահարում են որպես բելգիական լրտեսի:

Լեոպոլդին քսան տարով մոռանում են:

Վաթսունմեկ թվականին հայր պատահաբար մտնում է կենտրոնական հեռագրատուն: Աշծատակցուհիներից մեկի հետ զրուցելիս իմանում է, որ այդտեղ կան եվրոպական բոլոր մայրաքաղաքների հասցեներն ու հեռախոսները: Բացում է Բրյուսելի հեռախոսագիրքը: Ու անմիջապես գտնում իր բավական հազվադեպ ազգանունը . . .

— Խոսակցություն կարո՞ղ եմ պատվիրել:

— Իհարկե:

Երեք րոպեից միացնում են Բրյուսել: Հստակ լսվում է ծանոթ ձայնը.

— Հելլոու:

— Լեոպոլդ, — բացականչում է հայրս:

— Սպասիր, Դոդիկ,– ասում է Լեոպոլդը, — տելեվիզիոնն անջատեմ.. .

Եղբայրներն սկսում են գրել միմյանց: Լեոպոլդը գրում է, որ կին ունի՝ Հելենա, որդի՝ Ռոմանո, և դուստր՝ Մոնիկ: Ինչպես նաև պուդել՝ Իգոր անունով: Որ «իր գործն» ունի: Որ գրամեքենաներ ու թուղթ է վաճառում: Որ թուղթը թանկանում է, ինչը միանգամայն ձեռնտու է իրեն: Որ սղաճը, այդուհանդերձ, գրեթե սնանկացրել է իրեն:

Իր աղքատությունը Լեոպոլդը նկարագրում էր այսպես. «Տներս վերանորոգման կարիք ունեն: Մեքենաներս չորս տարի չեն թարմացվել...»:

Հորս նամակները անհամեմատ ավելի լավատեսական էին. «... Ես գրող եմ ու ռեժիսոր: Ապրում եմ փոքրիկ, հարմարավետ բնակարանում: (Նկատի ուներ ֆաներայի միջնապատով առանձնացված իր խուցը): Կինս մեքենայով մեկնել էր Մերձբալթիկա: (Իրոք, հորս կինը պրոֆմիության ավտոբուսով գնացել էր Ռիգա զուգագուլպաներ գնելու): Իսկ թե ինչ բան է սղաճը, գաղափար անգամ չունեմ...»:

Հայրս բազմաթիվ հուշանվերներ ուղարկեց Լեոպոլդին: Փայտե գդալների ու ափսեների մի ամբողջ նավատորմ: Լև Տոլստոյի ինքնաեռի մելքիորե կրկնօրինակը: Ուրալյան կիսաթանկարժեք քարերից պատրաստված մի քանի արձանիկ: Շևչենկոյի «Կոբզարի» հոբելյանական հրատարակությունը, որ միջին տապանաքարի չափ էր: Ինչպես նաև «Տապան զրահապատ» անունը կրող հուշանվերային արտադրանքը:

Լեոպոլդն արձագանքեց ձյունաճերմակ թաշկինակով՝ շատ գեղեցիկ տուփի մեջ: Հետո հորս համար տրիկոտաժե մայկա ուղարկեց «Էդդի Շապիրո: Անիվներ և անվադողեր» մակագրությամբ: Հայրս չէր հանձնվում: Զանգեց քաղկոմի իր ծանոթ հրահանգչին: Վերջինիս միջոցով հայթայթեց մի եզակի հուշանվեր: Դա շաքարի ութ կիլոգրամանոց ամբողջական կտոր էր: Դա շաքարի ութ կիլոգրամանոց ամբողջական կտոր էր: Երկնագույն սատինի փայլող թղթում փաթաթած: Վեցդյույմանոց տրամաչափի մի արկ: Մակագրությունն էլ հին ուղղագրությամբ՝ «Առաջին գիլդիայի վաճառական էլպիֆիդոր Ֆոմինի առեւտրային տուն»:

Ծանոթ հրահանգչին հայրս պարտավորված կոնյակ հյուրասիրեց: Եզակի հուշանվերը ուղարկեց Լեոպոլդին:

Երկու ամիս հետո ծանրոցի ծանուցագիր ստացանք: Քաշը՝ տասներկու կիլոգրամ: Մաքսատուրքը՝ վաթսունյոթ ռուբլի:

Հայրս խիստ ոգեւորության մեջ էր: Փոստատուն գնալիս երգում էր .

«Մագնիտոֆոն . . . Դուբլյոնկա . . . Վիսկի»:

— Քո կարծիքով, դուբլյոնկան քանի՞ կիլոգրամ կլինի:

— Մոտ երեք, — պատասխանեցի:

— Ուրեմն երեք հատ դուբլյոնկա է ուղարկել:

Փոստատան ծառայողը մե հանձնեց ծանր արկղը:

— Տաքսիով գնանք, — ասաց հայրս:

Վերջապես հասանք տուն: Նյարդային ծիծաղով հայրս բերեց դուրը: Ֆաներայե կափարիչը ճռռոցով մի կողմ թռավ:

— Ապո՛ւշ, — տնքաց հայրս:

Արկղում տասը կիլոգրամ դեղնավուն շաքարավազ էր . . .

Դրանից ութ տարի հետո ես ու մայրս ստիպված էին արտագաղթել: Հայտնվեցինք Ավստրիայում: Հյուրանոցի տերը՝ Ռեյնհարտը շատ սիրալիր էր մեր նկատմամբ: Ամեն առավոտ մեզ մատուցում էին թեյ՝ դեռեւս տաք թխվածքով ու ջեմով: Ամեն առավոտ Ռեյնհարտը անպայման հարցնում էր .

— Մի բաժակ օղի ուզո՞ւմ ես . . .

Հավելումն՝ մեզ ռադիոընդունիչ էր տվել ու էլեկտրական տոստեր:

Երեկոները հաճախ զրուցում էր հետը:

Իմացա, որ Ռեյնհարտը Արեւելյան սեկտորից էր փախել Արեւմուտք: Որ ինժեներ-շինարար է: Որ նեղվում է հյուրանոցում աշխատելուց, թեեւ լավ եկամուտ ունի . . .

— Ամուսնացա՞ծ ես, — հարցրի:

— Էրիկան ապրում է Զալցբուրգում:

— Ասում են, ամենակայուն ամուսնությունը ապահարզանի եզրին գտնվողն է:

— Ես այդ եզրն արդեն հատել եմ: Այնուհանդերձ՝ ամուսնացած եմ . . . Զարմանո՞ւմ ես:

— Ոչ, — ասացի:

— Կուսակցության անդամ եղե՞լ ես:

— Ոչ:

— Իսկ երիտասարդական միությունո՞ւմ:

— Այո: Դա մեխանիկորեն է լինում:

— Հասկանում եմ: Արևմուտքը հավանո՞ւմ ես:

— Բանտից հետո ամեն ինչ էլ հավանում եմ: Հորս ձերբակալել էին քառասուն թվականին: Նա Հիտլերին անվանում էր «բրաուն շվայնե»:

— Կոմունի՞ստ էր:

— Ոչ: Հայրս կոմմի չէր: Նույիսկ կարմիր էլ չէր: Պարզապես կրթված մարդ էր: Լատիներեն գիտեր... Դու լատիներեն գիտե՞ս:

— Ոչ:

— Ես էլ չգիտեմ: Երեխաներս էլ չեն իմանա: Ափսոս... Լատիներենն ու Ռոդ Սթյուարտը, իմ կարծիքով, անհամատեղելի են:

— Ո՞վ է Ռոդ Սթյուարտը:

— Կիթառով գիժ: Օղի ուզո՞ւմ ես:

— Այո:

— Սենդվիչներ բերեմ:

— Պետք չէ:

— Ճիշտ ես ասում...

Վիեննայից գրեցի Լեոպոլդին: Հորեղբայրս զանգեց հյուրանոց: Ասաց, որ ինքնաթիռով կգա շաբաթավերջին՝ շաբաթ օրը: Կիշնանի «Կոլիզեումում»: Խնդրեց, որ շաբաթ օրը չնախաճաշեմ:

— Քեզ կհյուրասիրեմ լավ ռեստորանում, — ասաց...

Վաղ առավոտյան նստած էի «Կոլիզեումի» նախասրահում: Այդ հյուրանոցը մերից շատ ավելի շքեղ էր երևում: Կողքովս անցնում էին ընտրագույն շներ: Հանդերձապահը նման էր կինոդերասանի:

Ուղիղ ժամը տասնմեկին իջավ հորեղբայրս: Անմիջապես ճանաչեցի նրան: Լեոպոլդը նման էր հորս՝ բարձրահասակ, բարեկազմ, գեղեցիկ արհեստական ատամներով: Հետը երիտասարդ մի կին էր:

Գիտեի, որ հարկավոր է գրկել այդ, ըստ էության, անծանոթ մարդուն:

Գրկախառնվեցինք: Համբուրեցի Հելենայի ձեռքը:

— Այս ինչ հսկա ես, — բացականչեց Լեոպոլդը: — Իսկ ո՞ւր է մայրդ:

— Նա վատառողջ է:

— Շատ ափսոս: Ես տեսել եմ նրա լուսանկարները: Դու շատ նման ես մորդ:

Նրան մեկնեցի բերածս փաթեթը: Խավիար էր, փայտե մատրյոշկաներ, քաթանե սփռոց:

— Շնորհակալություն: Սրանք կթողնենք դռնապանի մոտ: Ես նույնպես նվերներ ունեմ ձեզ համար . . . Իսկ հիմա կգնանք ռեստորան: Դու սիրո՞ւմ ես ռեստորան գնալ:

— Այդ մասին չեմ մտածել:

— Այնտեղ հաճելի երաժշտություն է լինում, գեղեցիկ կանայք . . .

Քայլում էինք կենտրոնի ուղղությամբ: Լեոպոլդը անդադար խոսում էր:

Հելենան լուռ ժպտում էր:

— Տեսնում ես, ինչքան մեքենա կա: Դու երբեւէ արտասահմանյան մեքենաներ տեսե՞լ էիր:

— Լենինգրադ շատ զբոսաշրջիկներ են գալիս . . .

— Վիեննան փոքր քաղաք է: Ասենք՝ Բրյուսելն էլ: Ամերիկայում մեքենաներն անհամեմատ ավելի շատ են: Եվ ի՛նչ մեքենաներ: Լենինգրադում մեծ խանութներ կա՞ն:

— Խանութներ կան, — ասում եմ:

— Այս ինչ հսկա ես: Քեզ, երեւի, կանայք սիրում են, չէ՞:

— Շուտով կերեւա:

— Հասկանում եմ: Կինդ Ամերիկայում է: Մենք այցելեցինք նրան Հռոմում: Պայուսակի փոխարեն պլաստիկե տոպրակ էր ձեռքին: Ես նրան լավ պայուսակ նվիրեցի՝ վաթսուն դոլարանոց . . . Հասանք: Հենց այստեղ էլ կնախաճաշենք: Իմ կարծիքով, սա լավ ռեստորան է:

Ներս մտանք, հանվեցինք, նստեցինք լուսամուտի մոտ:

Մեղմ հնչող երաժշտության մեջ արտառոց ոչինչ չկար: Գեղեցիկ կանայք էլ ինչ-որ չէին երեւում:

— Պատվիրիր ինչ ուզում ես, — առաջարկեց Լեոպոլդը, — գուցե տավարի կամ թռչնի մի՞ս:

— Ինձ համար միեւնույն է: Ձեր հայեցողությամբ:

— Ինձ հետ «դու»-ով խոսիր, խնդրում եմ: Չէ՞ որ հորեղբայրդ եմ:

— Քո հայեցողությամբ:

— Գուցե համադա՞մ ինչ-որ բան: Դու սիրո՞ւմ ես համադամ ուտելիք:

— Չգիտեմ:

— Ես շատ եմ սիրում համադամ ուտելիք: Բայց լյարդս հիվանդ է: Քեզ համար կպատվիրեմ ձկան պաշտետ ու մի քիչ ծնեբակ:

— Հիանալի է:

— Ի՞նչ ես խմելու:

— Գուցե օղի՞: — Դեռ վաղ է: Կարծում եմ՝ սպիտակ գինի կամ թեյ:

— Թեյ, — ասացի:

— Եվ պիստակի պաղպաղակ:

— Հիանալի է:

— Ի՞նչ ես խմելու, — կնոջը դիմեց Լեոպոլդը:

— Օղի, — ասաց Հելենան:

— Ի՞նչ, — ապշեց Լեոպոլդը: — Օղի, օղի, — կրկնեց կինը:

Մոտեցավ մատուցողը՝ սևահեր, կոճղանման, երևի հարավսլավացի կամ հունգարացի:

— Սա իմ զարմիկն է Ռուսաստանից, — ասաց Լեոպոլդը:

— Մոմենտ, — ասաց մատուցողը:

Արագ հեռացավ: Հանկարծ երաժշտությունը դադարեց: Թեթև խշշոցից հետո լսվեցին «Պոդմոսկովնիյե վեչեռայի» վաղուց ձանձրացրած առաջին ակորդները:

Հայտնվեց մատուցողը: Նրա դեմքին փայլում էր ինքնագոհ ու հիմար ժպիտը:

— Շնորհակալ եմ, — ասացի:

— Նա լավ թեյադրամ կստանա, — ականջիս շշնջաց Լեոպոլդը: Մատուցողն ընդունեց պատվերը:

— Հա, քիչ մնաց մոռանայի, — բացականչեց Լեոպոլդը, — ծնողներս ինչպե՞ս են մահացել:

— Պապին ձերբակալել էին պատերազմից առաջ: Ռայա տատը մահացավ քառասունվեց թվին: Ես նրան աղոտ եմ հիշում:

— Ձերբակալե՞լ էին: Ինչի՞ համար: Նա կոմունիստներին դե՞մ էր:

— Չեմ կարծում:

— Հապա ինչո՞ւ ձերբակալեցին:

— Հենց այնպես:

— Տեր Աստված, ինչ վայրենի երկիր է, — խուլ տնքաց Լեոպոլդը: — Ախր, գոնե ինչ-որ բացատրություն կարո՞ղ ես տալ:

— Թերեւս չեմ կարող: Այդ մասին տասնյակ գրքեր են գրվել:

Լեոպոլդը թաշկինակով սրբեց աչքերը:

— Ես գրքեր կարդալու ժամանակ չունեմ: Ես չափազանց շատ եմ աշխատում . . . Նա մահացել է բանտո՞ւմ:

Չէի ուզում ասել, որ պապին գնդակահարել են: Մոնյայի անունն էլ չէի ուզում տալ: Որ ի՞նչ . . .

— Ի՜նչ վայրենի երկիր է: Ես եղել եմ Ամերիկայում, Իսրայելում, շրջել ամբողջ Եվրոպայում . . . Իսկ Ռուսաստան չեմ գնա:

— Այնտեղ համատարած շախմատ է, բալետ ու «սեւ ագռավ» . . . Դու շախմատ սիրո՞ւմ ես:

— Այնքան էլ չէ:

— Իսկ բալե՞տ:

— Դրանով առանձնապես չեմ հետաքրքրվում:

— Ինչ-որ հիմարություն է՝ ուրվականներով, — ասաց հորեղբայրս:

Հետո հարցրեց .

— Հայրդ ուզո՞ւմ է գալ այստեղ:

— Հուսով եմ:

— Ի՞նչ է անելու այստեղ:

— Ծերանալու է: Ամերիկայում նրան ոչ մեծ թոշակ կնշանակեն:

— Այդ թոշակով դժվար է առանց նեղվելու ապրել:

— Մի կերպ կապրենք, — ասացի:

— Քո հայրը ռոմանտիկ է: Երեխա ժամանակ շատ էր կարդում: Իսկ ես, ընդհակառակը՝ միայնգամայն առողջ եմ մեծացել . . . Լավ է, որ դու մորդ նման ես: Ես նրա լուսանկարները տեսել եմ: Դու շատ նման եք իրար . . .

— Մեզ հաճախ նույնիսկ շփոթում են, — ասացի:

Մատուցողը բերեց պաղպաղակը: Հորեղբայրս ձայնն իջեցրեց .

— Եթե փողի կարիք ունես, ասա:

— Մեր ունեցածը բավարար է:

— Այնուամենայնիվ, եթե փող պետք լինի, հայտնիր ինձ:

— Կհայտնեմ:

— Իսկ հիմա եկեք շրջենք քաղաքում: Ես տաքսի կանչեմ . . .

Հորեղբորս բնավորության մեջ հավանում էի տեղաշարժման սրընթացությունը: Ուր էլ հայտնվեինք, անդադար կրկնում էր.

— Շուտով ճաշելու ենք:

Ճաշեցինք քաղաքի կենտրոնում, բացօդյա ռեստորանում: Հունգարական քառյակ էր նվագում: Հորեղբայրս արժանապատվությամբ պարեց կնոջ հետ: Հետո նկատեցինք, որ Հելենան հոգնել է:

— Գնանք հյուրանոց, — ասաց Լեոպոլդը: — Քեզ համար նվերներ ունեմ:

Հյուրանոցում, հարմարեցնելով պահը, Հելենան շշնջաց ականջիս.

—Մի բարկացիր: Նա բարի մարդ է, թեև շատ հասարակ է:

Անասելի շփոթվեցի: Ես չգիտեի, որ նա ռուսերեն գիտի: Հետը զրուցելու ցանկություն ունեցա: Բայց արդեն ուշ էր...

Տուն վերադարձա յոթին մոտ: Ձեռքիս փաթեթում քլթքլթում էր մորս օծանելիքը: Փողկապն ու ճարմանդները դրել էի գրպանս:

Նախասրահում Ռեյնհարտից բացի ոչ ոք չկար: Նա ինչ-որ հաշվարկներ էր անում կալկուլյատորով:

—Ուզում եմ լինոլեումը փոխել, — ասաց:

— Վատ գաղափար չէ:

— Չխմե՞նք:

— Հաճույքով:

— Բաժակները տարել են չեխ հայրենակցական միության տղաները: Թղթե բաժակով կխմե՞ս:

— Ես ակնոցի տուփով էլ եմ խմել: Ռեյնհարտը հարգալի բարձրացրեց հոնքերը: Մի-մի բաժակ բրենդի խմեցինք:

— Կարող ենք հենց այստեղ էլ գիշերել, — ասաց Ռեյնհարտը, — ափսոս բազմոցները նեղ են:

— Ես գինեկոլոգիական աթոռին էլ եմ քնել:

Ռեյնհարտը ինձ նայեց էլ ավելի մեծ հարգանքով: Մի-մի բաժակ էլ խմեցինք:

— Լինոլեումը չեմ փոխի, — ասաց նա: — Այդպես որոշեցի, քանի որ աշխարհը դատապարտված է:

— Ճիշտ է, — ասացի:

— Յոթ փող ունեցող յոթ հրեշտակները արդեն պատրաստ են:

Դուռը թակեցին:

— Մի բացիր, — ասաց Ռեյնհայտը, — դա գունատ ձին է... Եվ ձիավորը, որին կոչում են մահ . . .

Էլի խմեցինք . . .

— Գնամ, — ասացի, — մայրս անհանգստանում է:

— Բարով գնաս, — դժվարությամբ արտաբերեց Ռեյնհարտը: — Չաո: Եվ կեցցե՛ քունը: Քանի քունը անգործությունից է: Իսկ անգործությունը միակ բարոյական վիճակն է: Ցանկացած գործություն՝ քայքայում է . . . Չաո . . .

— Մնաս բարով, — ասացի, — կյանքն անհեթեթ է: Անհեթեթ է թեկուզ այնքանով, որ գերմանացին ինձ ավելի մոտ է, քան հարազատ հորեղբայրս . . .

Ռեյնհարտին դրանից հետո տեսնում էի ամեն օր: Ճիշտն ասած, ինքս էլ չհասկացա, թե նա ինչպես մտավ այս պատմվածքի մեջ: Չէ՞ ր խոսքը միանգամայն այլ մարդու մասին էր: Իմ հորեղբայր Լեոյի մասին . . . .

Իսկ լինոլեումը, այնուամենայնիվ, փոխեց . . .

Լեոպոլդին այլեւս չեմ տեսել: Որոշ ժամանակ նամակագրական կապի մեջ էինք: Հետո մեկնեցի Միացյալ Նահանգներ: Նամակագրությունը ընդհատվեց: Հարկավոր է նրան բացիկ ուղարկել Ծննդյան տոնին . . .